Նորայր Մանվելյան

Կյանք պարադոքսալ

Կտակս է քեզ, էակ բազմաշնորհ,

Կյանքի օրհնանքը կրող, արարող,

Պատգամս է քեզ, մա՛րդ արարած,

Եվ խորհուրդս անկեղծ՝ փորձիցս խորհած:

Թե կամենաս աշխարհ լի սիրով,

Մարդկանց՝ անկեղծ ժպիտով վարակված,

Գտիր դու քո այն ժպիտը գերող,

Որ կշողա հայելուց դեմքիդ ամպամած:

Թե ճիգ թափես գտնելու հայրենիք,

Թաքնված կլինի այն հեռու արտերկրում:

Բարքերն օտարի, պանդուխտի կնիք՝

Քեզ ծնած ժողովրդի արժևորում:

Թե ձգտես գտնել կյանքի ընկերներ,

Պիտի, ցավո՛ք, դավաճանվես:

Նախանձի սարսուռներ, դավահյուս շշուկներ,

Հիացմունքից սթափության երախը մտնես:

Թե տենչաս հաստատել խաղաղություն,

Անդորրի լռության մեղեդին վայելել,

Սպասելու է քեզ ան-հանգստություն՝

Ունակ մեղեդին լսելի դարձնել:

Թե ուզենաս լցնել քո հոգին

Ներողամտության կենարար լույսով,

Պիտի ցնցվի քո աշխարհն ու ժայթքի

Վրեժխնդրության հրաբխով:

Թե ցանկանաս հասկանալ սերը՝

Ամենակալ, մշտապես ներկա,

Պետք է հագնես գորշագույն սքեմը,

Ճամփա ընկնես գիշերով լուսնկա:

Եվ երբ որ զգաս, որ լույս ես գտել՝

Կյանքի գույները բուռն արթնացնող.

Հույզերդ, տե'ս, ստվերներ են զցել

Հուշերի կրակին՝ մեղմորեն մարող: